

ՍՐՔԱԶԱՆ ՀՕՐ ՀԱՆԴԻՊՈՒՄԸ ԹՈՒՄԱՆԻ ՊԱՏՈՒԻՐԱԿՈՒԹԵԱՆ ՀԵՏ

Թուսանը նորակազմ փոքր Ծուխ մըն է, որուն այցելու Հոգեւոր Հովին է Արժ. Տ. Զաքարիա Քհնյ. Սարիբէկեան: Սրբազան Հայրը կարճ հանդիպում մը ունեցաւ այս պատուիրակութեան հետ, որուն ներկայ գտնուեցաւ նաեւ Տէր Հայրը: Անոնք սիրով Թուսան հրաւիրեցին Սրբազան Հայրը, որ իր յարմար ժամանակին այցելէ Ծուխը, Սուրբ Պատարագ մատուցանէ եւ իր հոգեւոր պատգամը տայ: Սրբազան Հայրը իր յաջորդ ժամանակացոյցին մէջ նկատի պիտի ունենայ այս պարագան եւ պիտի ջանայ Ծուխին համար մնայուն հոգեւորական մը նշանակել: Տէր Զաքարիան եւ Թուսանի բնակիչ Սարկարէթ Էհրամճեան միասնաբար պիտի լծուին այս ծրագրի յաջողութեան համար: